

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1

28.12.2016 թվականին կայացավ Արմավիրի մարզի Երվանդաշատ գյուղական համայնքի ընդհանուր ժողով մասնակցությամբ մարզպետարանի ներկայացուցիչ Ռ. Սարիբեկյանի և համայնքի 87 բնակիչների

Նախագահությամբ՝  Հ. Շահինյանի

Քարտուղարությամբ՝  Ս. Հարությունյանի

## ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ղեկավարի հաշվետու զեկույց, 2016 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Ջեկուցող՝ Հ. Ավետիսյան


1. ԱՄԵՑԻՆ -- Համայնքի ղեկավարի հաշվետու զեկույցը, 2016 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- 2016 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ Հ. Ավետիսյանը: Ջեկուցման շուրջ իրենց մտքերը արտահայտեցին Հովհաննես Շահինյանը, Ջավեն Գևորգյանը և Համլետ Ղազարյանը: Արտահայտվողները մատնանշեցին բնական գազի և համայնքը մարզկենտրոնի հետ կապող ճանապարհի հիմնահարցերը և այդ խնդիրներին հրատապ լուծում տալու ծայրահեղ անհրաժեշտությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հանձնարարել համայնքի ղեկավարին բարձրացրած խնդիրների վերաբերյալ բարձրաձայնել մարզպետարանում հիմնախնդիրներին, լուծում տալու համար:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ /  / Հ. Շահինյան

ՔԱՐՏՈՒԳԱՐ

 / Ս. Հարությունյան

հանձնարարականներով ցանցել են պաշտպանել Երվանդաշատ համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանությունը, աշխատել են այն կատարել առանց թերացումների:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքներին նախապատրաստվելու առումով աջակցել են ոռոգման համակարգի վերանորոգման աշխատանքներին: Գյուղատնտեսական տեխնիկայի համար նախապես ձեռք է բերվել պահեստամասեր, աշխատանքների անխափան կազմակերպման համար: Կառավարության կողմից, որպես աջակցություն ստացված շուկայականից ցածր գնով պարարտանյութը բաժանվել է համագյուղացիներին ըստ հեկտարի:

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում խոտհունձի, հակավորման և անբարման աշխատանքները ժամանակին կատարելու համար, աջակցել են վառելանյութով և պահեստամասերով: Ծայրահեղ լարված է եղել ոռոգման ջրամատակարարումը, որը կարգավորել են աննիջապես ջրբախշներին օգնելով:

Հետևել են գյուղ կենդանիների պրոֆիլակտիկ միջոցառումների անթերի կատարմանը: Առավել կարևոր միջոցառումների անցկացմանը և կազմակերպմանը մասնակցել են նաև գյուղապետարանի աշխատակիցները: Հատկապես արյան անալիզների համար խոշոր եղջերավոր կենդանիներից արյուն վերցնելու աշխատանքներին մասնակցել և օգնել են գյուղապետարանի աշխատակիցները:

Քաղաքացիների ընդունելությունը կատարում են ամեն օր, սահմանված կարգով, ուշադրությամբ լսում ամենքին, քննարկում առաջ քաշած հարցերը և առաջարկությունները, ընդունում դիմումները և բողոքները, օրենքի սահմաններում ձեռնարկում են միջոցներ, հարցերին լուծում տալու համար:

Ֆինանսների բնագավառում կատարել են հետևյալ աշխատանքները՝

Հաշվետու ժամանակահատվածում եռամսյա հաշվետվություններ են ներկայացրել համայնքի ավագանուն: Կերահսկել են համայնքի բյուջեի միջոցների նպատակային օգտագործման գործընթացը:

2016 թվականի մարտի 17-21-ը տեղի ունեցած ցրտահարության հետևանքով համայնքի բնակիչները զրկվեցին իրենց հիմնական եկամտի աղբյուր, ծիրանի բերքից: Այնուհետև մայիսի 3-ին տեղացած կարկտահարության հետևանքով մասնակի վնասվեց համայնքի ցանքատարածքները, ինչպես նաև սալորենու և դեղձենու այգիները: Ղա էլ հանդիսացավ պատճառ, առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեի թերի կատարման համար:

Օրենքով սահմանված կարգով կազմակերպել են հողի հարկի և գույքահարկի գանձման աշխատանքները: 2016-թ, ամբողջ տարվա ընթացքում մուտքագրվել է՝

հողի հարկ – պլան 2000,0 հազ. դրամ,- կատ. 2000,9  
գույքահարկ- պլան 1164.8,0 հազ. դրամ – կատ. 1764,0 հազ. դրամ  
վարձավճար - պլան 700,0 հազար դրամ - կատ. 700,0  
ոչ հարկային եկամուտներ պլան 808,08 հազ. դրամ– կատ. 809,0  
տեղական տուրք – պլան 16,0 հազ. դրամ- կատ. 16,0  
այլ գույքի վարձակալություն պլան 480,0 հազ. դրամ- կատ. 440 հազ. դրամ:

Հասարակական կարգի բնագավառում, համագործակցում են ուստիկանության աշխատակիցների հետ:

Կա փոխհամագործակցում աշխատանքների կազմակերպման գործընթացում:

Անձնագրային սեղանի պետի հետ մշտապես առկա է փոխադարձ տեղեկատվություն բնակիչների ներհոսքի, արտահոսքի, ժամանակավոր բացակայողների վերաբերյալ:

Պաշտպանության բնագավառում կատարել են հետևյալ աշխատանքները՝

Աջակցել են զորակոչի կազմակերպչական աշխատանքներին, ժամանակին ներկայացրել զորակոչիկների անկետային տվյալները, բնութագրերը , տեղեկանքներ և այլն:

2016 թվականի ապրիլյան գերլարված օրերին կազմակերպել են նյութական աջակցություն և ուղղարկել ԼՂՀ պաշտպաններին: 2016 թվականի մայիսին 20 օր եղել են ԼՂՀ դիրքերում մասնակցել պաշտպանության գործընթացին: Մշտապես համագործակցում են գյուղի սահմանապահ ուղղելակի հետ: Արդյունքում կամավորական դրուժինայի անդամների աջալրջության շնորհիվ վնասագերծվել է սահմանը խաղաղ օտարերկրացի և հանձնվել է համապատասխան մարմիններին:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում, բնակչության մեջ տարել են բացատրական աշխատանքներ «Ինքնական շինությունների» կանխարգելման ու կասեցման վերաբերյալ:

2016 թվականի ընթացքում <<ՖՈՒԼԵՐ>> տնաշինական կազմակերպության միջոցով համայնքում կազմակերպել և ավարտին են հասցրել 3 բնակարանների ապահովելով արևային ջրատաքացուցիչներով, ևս 14 բնակարան ապահովվել է արևային ջրատաքացուցիչներով "SHTIGEN" ֆիրմայի աշխատակիցների կողմից: Ժամանակին կատարում են շինությունների հաշվառում, անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն ներկայացնում մարզպետարան:

Սարգսյետարանից ստացած շրջաբերականների ինֆորմացիան (բնակարանաշինության վերաբերյալ) հայտարարության միջոցով իրազեկել են համայնքի բնակիչներին:

2016 թվականի ընթացքում հետևել են համայնքի փողոցները լուսավորող անսարք լուսամփոփների վերանորոգմանը: Պարբերաբար կատարել են խմելաջրի մանրեազերծում քլորացման եղանակով:

Պատշաճ նակարդակի է աղբաթափման աշխատանքները:

Հողօգտագործման բնագավառում հետևել են համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման,

տրանսպարենտ լինելու և մարզպետին համայնք մտնող ճանապարհորդ և կիլոմետրանոց ճանապարհահատվածը կապիտալ վերանորոգելու համար: Սակայն այդ ուղղությամբ երկար տարիներ է ոչ մի աշխատանք չի կատարվում, որը առաջացնում է համայնքի բնակիչների խստագույն դժգոհությունը, հատկապես բնամթերքը շուկա հասցնելու ժամանակ ճանապարհի անսարքության պատճառով բնամթերքը ապրանքային տեսքը կորցնում է:

Առևտրի և սպասարկման բնագավառում վերահսկում են համայնքում գործող մթերային խանութների և սնունդ արտադրող օբյեկտների աշխատանքները: Յուրաքանչյուր կիսամյակ հաշվետվություններ են ներկայացնում մարզպետարան հանրային սննդի և առևտրի օբյեկտների վերաբերյալ:

Կրթության և մշակույթի բնագավառում, միշտ տեղեկացված են եղել այս բնագավառի խնդիրներին և տվել հրատապ լուծումներ: Աշխատանքներ են տանում կապ ստեղծել դպրոցի, բնակչության, մշակույթի տան և գրադարանի միջև, որը ինձ մասամբ հաջողվում է:

Առողջապահության բնագավառում հաճախակի խորհրդակցության են հրավիրում գյուղի առողջության կենտրոնի տնօրենին: Լսում են առաջ քաշված խնդիրները քննարկում դրանք և տալիս համապատասխան լուծումներ:

Սոցիալապես անապահով խավերի համար աշխատում են ամեն ինչ անել նրանց պայմանների բարելավման համար:

Եթե աշխատատեղեր են բացվում, առաջնահերթ այդ ընտանիքների անդամներին են ապահովում աշխատանքով:

Ամփոփիչ խոսքով ուզում են ասել որ իմ աշխատանքները նպատակամղված են Երվանդաշատ համայնքի բնակիչների ապրելակերպը բարեկեցիկ դարձնելուն, որը դանդաղ սակայն հաստատուն քայլերով իրականանում է:

Երվանդաշատի գյուղապետ /



/ Հ.Ավետիսյան